# ՀՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԱՐԵԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԸ

Այս տարվա մարտի 26-ին կայացավ ՀՍՍՀ գիտությունների ակադեմիայի տարեկան ընդհանուր ժողովը։

«Ակադեմիայի 25 տարին և նրա հերթական խնդիրները» զեկուցմամբ հանդես եկավ ակադեմիայի պրեզիդենտ, ակադ. Վ. Համբարձումյանը։ Այնուհետև ընդհանուր ժողովը քննարկեց ակադեմիայի 1968 թ. գիտական գործունեության հիմնական արդյունքները։

Ակադեմիայի գիտնականները աչքի ընկնող նվաճումներ են ձեռք բերել մաթեմատիկայի, ֆիզիկայի, քիմիայի, կենսաբանության և հասարակական գիտությունների բնագավառում։ Հանրապետության առաջատար ինստիտուտների գիտական նվաճումները հայտնի են նրա սահմաններից դուրս։

Ակադեմիան գիտության մեջ նոր նվաճումներով և հետազոտական նորույթներով է պատրաստվում դիմավորելու Վ. Ի. Լենինի ծննդյան 100-ամյակը և Հայաստանում սովետական իշխանության հաստատման 50-ամյակը։

Հսկայական նշանակություն տալով արդյունաբերության զարգացմանը Հայաստանում, ակադեմիան մեծ ուշադրություն է դարձնում ֆիզիկա-մաթեմատիկական և տեխնիկական գիտությունների զարգացման վրա։ Այդ ասպարեզում գործող ինստիտուտների կոլեկտիվները շարունակում են կարևոր պրոբլեմների հետազոտությունները, իսկ առանձին ինստիտուտներ գիտության մեջ աչքի ընկնող գիրք են գրավել։ Հայ ֆիզիկոսների, մեխանիկների, մաթեմատիկոսների գիտական աշխատանքը մեծ դեր է խաղում Հայաստանում էլեկտրատեխնիկական, ռադիոտեխնիկական, էլեկտրոնային, սարքաշինական արդյունաբերության զարգացման գործում։

ԳԱ նուրբ օրգանական քիմիայի, օրգանական քիմիայի և բիոքիմիայի ինստիտուտների գիտնականները խոշոր հաջողությունների են հասել։ Նուրբ օրգանական քիմիայի բնագավառում կատարած մեծ աշխատանքի համար ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս Ա. Լ. Մնջոյանին շնորհվեց սոցիալիստական աշխատանքի հերոսի բարձր կոչում։

Զգալի աշխատանք է կատարվել երկրաբանական գիտությունների բնագավառում։ Մասնավորապես, հայտնի է ակադեմիայի երկրաբանների աշխատանքը մոլիբդենի ու երկաթահանքի պաշարների, ինչպես նաև ցրված ու հազվագյուտ տարրերի ուսումնասիրության բնագավառում։

Գեոֆիզիկայի և ինժեներային սեյսմոլոգիայի ինստիտուտում կատարված տեսական ու գործնական կարևոր նշանակություն ունեցող աշխատանքների համար ինստիտուտը վերջերս պարգևատրվեց Աշխատանքային կարմիր դրոշի շքանշանով։

Հայ գիտնականները կարևոր աշխատանքներ են կատարել կենսաբանական գիտությունների բնագավառում։ Շարունակվել են Հայաստանի բուսական և կենդանական աշխարհի ուսումնասիրությունները, բույսերի ֆիկիոլոգիայի գծով կատարվող հետազոտությունները, զգալի աշխատանք է կատարվել կերային սպիտակուցի պրոբլեմի լուծման ուղղությամբ։

Հասարակական գիտությունների բնագավառում շարունակվել են աշխատանքները հայ ժողովրդի պատմության, լեզվի, գրականության, հնագիտության, արվեստի, փիլիսոփայության ու իրավունքի, ինչպես նաև տնտեսագիտության և արևելագիտության ասպարեզներում։ Ակադեմիայի ինստիտուտները հայագիտության բնագավառում մի շարք խոշոր հաջողություններ են ունեցել, հրատարակելով բազմաթիվ գրքեր, այդ թվում նաև հայ դասական գրողների երկերը։

Ակադեմիան զգալի աշխատանք է տարել ժողովրդական տնտեսության մեջ գիտական աշխատությունների արդյունքների ներդրման ուղղությամբ։

Ընդլայնվել են ակադեմիայի միջազգային կապերը։ Միայն 1968 թ. ակադեմիայի գիտնականները եղել են Հունգարիայում, Ռումինիայում, Լեհաստանում, Չեխոսլովակիայում, Կանադայում, ԱՄՆ-ում, Շվեդիայում, Բելգիայում, Մեքսիկայում և շատ այլ երկրներում, որտեղ ծանոթացել են արտասահմանյան գիտնականների աշխատանքի փորձին, հանդես են եկել գիտական զեկուցումներով։ Կարևոր իրադարձություն էր Հայաստանի և Հունգարիայի գիտությունների ակադեմիաների միջև անմիջական գիտական համագործակցության պայմանագրի կնքումը 1968 թ. ապրիլին, որը Հայաստանի ակադեմիայի պատմության մեջ առաջինն է։ Անցյալ տարի ՀՍՍՀ ԳԱ ընդունել է կապիտալիստական և սոցիալիստական երկրների 86 գիտնականների։ Աճել է հայ գիտնականների միջազգային հեղինակությունը։ ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս Ի. Վ. Եղիազարովը արժանացել է Բուդապեշտի տեխնիկական համալսարանի պատվավոր դոկտորի կոչման, իսկ երկրաբանական գիտությունների ինստիտուտի ավագ գիտական աշխատակից

Է. Գ. Մալխասյանն ընտրվել է էրկրաբանական գիտությունների պատմության միջազգային կոմիտեի թղթակից-անդամ։

ՀՍՍՀ ԳԱ 1968 թ. գիտական գործունեությանը և ակադեմիայի 25-ամյակին նվիրված տարեկան ընդհանուր ժողովին նախորդեցին ակադեմիայի բաժանմունքների նիստերը, որտեղ քննարկվեցին բաժանմունքների մեջ մտնող ինստիտուտների 1968 թ. գիտական գործունեության հիմնական արդյունքները։

Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆ

## ՀԱՅ–ՀՈՒՆԳԱՐԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

1968 թ. ապրիլի 24-ին Բուդապեշտում ՀՍՍՀ գիտությունների ակադեմիայի պրեզիդենտ, ակադեմիկոս Վ. Հ. Համբարձումյանը և Հունգարական ակադեմիայի պրեզիդենտ, ակադեմիկոս Իշտվան Ռուսնյակը համատեղ արձանագրություն ստորագրեցին երկու ակադեմիաների միջև փոխադարձ գիտական կապերը ուժեղացնելու և բնդհանուր հետաքրքրություն ներկայացնող գիտական պրոբլեմները համատեղ ուսումնասիրելու մասին։ Այդ միջոցառումը ՍՍՀՄ և Հունգարական ակադեմիաների միջև 1958 և 1961 թթ. կնքված համաձայնության իրագործման կարևոր քայլերից մեկն էր։

ՀՍՍՀ ԳԱ նախագահության որոշմամբ այս տարի Հունգարիա ուղարկվեց հայ գիտնականների մի խումբ, որի կազմում էին ՀՍՍՀ գիտությունների ակադեմիայի հասարակական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար, ակադեմիկոս Ե. Աղայանը, ակադեմիայի նորբ օրգանական քիմիայի ինստիտուտի դիրեկտոր, ակադեմիկոս Ա. Մնջոյանը, պատմության ինստիտուտի հայ դպիրավայրերի պատմության բաժնի վարիչ, պատմական գիտությունների թեկնածու Վ. Ոսկանյանը և արևելագիտության սեկտորի ավագ գիտաշխատող, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆ. Ե. Մարգսյանը։ 1969 թ. հունվարի 13–27-ը պատվիրակությունը եղավ Բուդապեշտում, ծանոթացավ Հունգարական ակադեմիայի մի շարք հիմնարկների աշխատանքին, թեմատիկային և գիտահետազոտական գործունեությանը, ինչպես և Հունգարիայի գիտնականների հետ քննարկեց հասարակական գիտությունների բնագավառում համագործակցության կոնկրետ խնդիրները։

Հունվարի 24-ին ակադեմիկոս Ե. Գ. Աղայանը և Հունգարական ակադեմիայի ակադեմիկոս Մատրիա Լասլոն համաձայնություն ստորագրեցին հասարակական գիտությունների բնագավառում Հայաստանի և Հունգարիայի ակադեմիաների համագործակցության մասին։ Այդ համաձայնագրով հայ և հունգար գիտնականների գիտահետազոտական աշխատանքները պետք է ընթանան հիմնականում պատմության, հնագիտության ու ազգագրության, արվեստի պատմության, գրականագիտության և լեզվաբանության գծով։ Հայ և հունգար պատմաբանները պատմության բնագավառում համատեղ ուսումնասիրելու են այնպիսի թեմաներ, ինչպես «Հայկական աղբյուրները հունգարների նախապատմության և նրանց հետ շփում ունեցող ժողովուրդների մասին V—IX դդ.», «Հունգարական աղբյուրները հայերի մասին», «Հունգարա-հայկական կապերի մասին», «1848—1849 թթ. Հունգարիայի ազգային-ազատագրական պայքարի արտացոլումը հայկական պարբերականներում», «Հունգար ժողովրդի ներկայացուցիչների մասնակցությունը Անդրկովկասի հեղափոխական շարժումներին և հայերի մասնակցությունը Հունգարիայի հեղափոխական շարժումներին» և այլն։ Հնագիտության և ազգագրության բնագավառում հունգար և հայ հնագետները ու ազգագրագետները համաձայնության են եկել փոխադարձաբար մասնակցել հին շրջանին վերաբերող պեղումներին Հայաստանում և Հունգարիայում։ Արվեստի բնագավառում որոշվեց ուսումնասիրել Հունգարիայի ճարտարապետական հուշարձանները և ցույց տալ փոխադարձ կապերը կերպարվեստի տարբեր ճյուղերում։ Համաձայնություն կնքվեց հատուկ ուսումնասիրություն գրել 1887—1913 թթ. կեղծում հունգարերեն լույս տեսած «Արմենիա» պարբերականի մասին, որի էջերում լայնորեն լուսաբանվել է Հունգարիայի տնտեսական և կուլտուրական կյանքը, ինչպես նաև տպագրվել են հայագիտությանը վերաբերող նյութեր։

* * *

Մարտի 18-ին տեղի ունեցավ ՀՍՍՀ ԳԱ պատմության ինստիտուտի գիտական նստաշրջան՝ նվիրված Հունգարական պրոլետարական հեղափոխության և Հունգարական Սովետական Հանրապետության հռչակման 50-ամյակին։